ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Վարդանաշեն, 077.07.00.10, vardanashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 19-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի ԹԻՎ 13-Ա ԵՎ ԹԻՎ 14-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ կետով

Որոշում եմ՝

1. Չեղյալ ճանաչել համայնքի ղեկավարի 2017թվականի մարտի 15-ի «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու մասին» թիվ 13-Ա և «Տնամերձ հողամասին կից ավել օգտագործվող հողատարածքը անհատույց սեփականության իրավունքով հատկացնելու մասին» թիվ 14-Ա որոշումները:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

20 17 թ. ապրիլի 10
գ.Վարդանաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Վարդանաշեն, 077.07.00.10, vardanashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ապրիլի 2017թվականի N 20

ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի բնակիչ՝ Ահմադ Բասոյի Գուսեյանը (ծնվ.06.06.1953.),Գյավազ Կակեյի Գուսեյանը (ծնվ. 14.10.1953թ.),Հայկազ Ահմադի Գուսեյանը (ծնվ. 30.11.1974), Թուկազ Ահմադի Գուսեյանը (ծնվ.27.08.1976), Կնյազ Ահմադի Գուսեյանը (ծնվ. 12.07.1980) և Հերիքնազ Ահմադի Գուսեյանը (ծնվ.22.12.1981) դիմել են Վարդանաշեն համայնքի 8-րդ փողոցի 26-րդ տուն հասցեում գտնվող 0,28հա հողամասի վրա մինչև 2001 թվականը կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ քաղաքաշինության նորմերի էական խախտումներով, չի խախտում այլ անձանց շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով "Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին" ՀՀ օրենքով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի 8-րդ փողոց 26-րդ տուն հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ քաղաքացիներ Ահմադ Բասոյի Գուսեյանի (ծնվ.06.061953.), Գյավազ Կակեյի Գուսեյանի (ծնվ. 14.10.1953թ.) Հայկազ Ահմադի Գուսեյանի (ծնվ. 30.11.1974), Թուկազ Ահմադի

Գուսեյանի (ծնվ.27.08.1976), Կնյազ Ահմադի Գուսեյանի(ծնվ. 12.07.1980) և Հերիքնազ Ահմադի Գուսեյանի (ծնվ.22.12.1981) գույքային իրավունքները ճանաչելով նրանց սեփականության իրավունքները 0.28հա օրինական հողամասի վրա 1980թվականին կառուցված 165.80քմ բնակելի տան, թիվ 1 տարածք, անասնաշենք 28,80քմ կառուցված 1985թ թիվ 2-րդ, տարածք, թոնրատուն 14,30քմ կառուցված 1985թ թիվ 3-րդ, տարածք:

2. Տնամերձ հողամասին կից ավել օգտագործվող 0,0132քմ հողատարածքը անհատույց սեփականության իրավունքով հատկացնել Ահմադ,Գյավազ,Հայկազ,Թուկազ,Կնյազ և Հերիքնազ Գուսեյաններին:

3. Անշարժ գույքը բավարարում է ՀՀ օրենսգրքի 117-րդ 1-ին, 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին:

4. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Ահմադ,Գյավազ, Հայկազ,Թուկազ,Կնյազ և Հերիքնազ Գուսեյանների սեփականության իրավունքները սույն որոշման 2-րդ կետով նշված, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2017թ. ապրիլի 10
գ.Վարդանաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Վարդանաշեն, 077.07.00.10, vardanashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ապրիլի 2017թվականի N 21-Ա

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի բնակիչ՝ Ահմադ, Գյավազ, Հայկազ, Թուկազ, Կնյազ և Հերիքնազ Գուսեյաններին սեփականության իրավունքով առաջին պետական գրանցման ժամանակ հատկացված է եղել 0.28հա տնամերձ հողամաս: Սակայն 2003թվականին կատարված չափագրման ժամանակ սեփականատիրոջ կողմից փաստացի օգտագործվող հողամասի չափը կազմել է 0.2932հա: Չափագրումների տարբերությունը կազմել է 0.0132հա, հաշվի առնելով , որ ավել օգտագործվող հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների տակ և բավարարում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերի պահանջներին, և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տնամերձ հողամասին կից ավել օգտագործվող 0.0132հա հողամասը անհատույց սեփականության իրավունքով հատկացնել Ահմադ, Գյավազ, Հայկազ, Թուկազ, Կնյազ և Հերիքնազ Գուսեյաններին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2017թ. ապրիլի 10.
գ.Վարդանաշեն